Արձանագրություն N 1
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նիստի

14 հուլիսի 2016թ

ք. Երևան սկիզբը՝ ժամը՝ 15^{00}-ին
ավարտը՝ ժամը 16^{30}-ին

Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ.

Ա.Թարվերդյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի» ռեկտոր
Ա. Ոսկանյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի վարիչ
Վ.Ուռուտյան	«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Գ.Սարդարյան	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ն. Մանուկյան	«Արենի» փառատոն» հիմնադրամի տնօրեն
Վ. Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Ս. Ավդալյան	«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Ղազանչյան	«Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ն.Դարբինյան	«Էկո-Գլոբ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ
Ե. Թարվերդյան	Հայաստանի պահածոյագործների և հյութարտադրողների միության նախագահ
Հ.Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
Հ.Հովհաննիսյան	«Հայկական պտղատնկարանների ասոցիացիա» գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Ջհանգիրյան	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերողների համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ս.Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության թռչնաբույծների միության նախագահ
Ա. Բիլյան	«Մսամթերք արտադրողների միություն» իրավաբանական

	անձանց միության նախագահ
Ռ.Ծառուկյան	«Մուլտի Ագրո» գիտարտադրական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Իսկոյան	«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Գոմկցյան	«Օքսֆամ» հայաստանյան մասնաճյուղի գյուղատնտեսական ծրագրերի պատասխանատու
Վ.Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության անդամ

Հրավիրված էին՝

Հ. Ծպնեցյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի վարչության պետ
Ա.Սմբատյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի մամուլի քարտուղար
Մ.Հովակիմյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ
Ս.Սիմոնյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Օրակարգ

1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վերջին տարիների միտումները և գյուղատնտեսության զարգացման ռազմավարության հիմնական դրույթները:

   (Զեկուցող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի զարգացման վարչության պետ Հ. Ծպնեցյան)

2. Այլ ընթացիկ հարցեր*:*

Նշվեց, որ խորհուրդն ունի 22 անդամ, որից ներկա են 20, 2-ը բացակայում են հարգելի պատճառներով:

Հասարակական խորհրդի նախագահ Ս. Կարապետյանի կողմից առաջարկվեց նիստի օրակարգը, որը հավանության արժանացավ խորհրդի անդամների կողմից:

Զեկույցով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ **Հ. Ծպնեցյանը** (կցվում է):

Անդրադառնալով վերջին 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքներին՝ Հրաչյա Ծպնեցյանը նշեց, որ այս ընթացքում գյուղատնտեսությունում էական դրական տեղաշարժեր են արձանագրվել, 2011-2015 թթ. ոլորտը ձևավորել է երկրի ՀՆԱ-ի 18.6%-ը, իսկ ագրովերամշակող ոլորտի հետ միասին՝ գրեթե 25.0%-ը: 2015 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 1002.2 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 11.7%-ով: 2012, 2013 և 2014 թթ. գյուղատնտեսության ոլորտում տնտեսական աճը կազմել էր համապատասխանաբար՝ 9.5, 7.1 և 7.2%: Գյուղատնտեսության տնտեսական աճի հետ մեկտեղ կարևորագույն ձեռքբերումներից է ոլորտի հիմնական ռեսուրսի՝ գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացումը:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2010-2015 թվականների ընթացքում ավելացել են 68.2 հազ. հեկտարով, միայն 2015 թվականին՝ 19.0 հազ. հեկտարով և կազմել են 351.8 հազ. հեկտար: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.8%, 2014 թվականի 74.4%-ի և 2010 թվականի 63.2%-ի դիմաց: Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում արձանագրված զարգացման միտումները, ներկայացրել պետական աջակցության ծրագրերի՝ արդյունքային ցուցանիշները:

Դրանք են՝

-«Ցորենի սերմանաբուծության և սերմարտադրության զարգացման»,

-«Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման»,

-«Հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»,

-«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման»,

-«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»,

-«Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում»,

-«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրերը:

Անասնապահության ոլորտի զարգացման համար առանձնակի կարևորվել են <<Համայնք-ների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առաջին և երկրորդ ծրագրերը:

Այնուհետև ներկայացվեցին ՀՀ գյուղատնտեսության 2016-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության նախագծի հիմնադրույթները:

Անդրադարձ կատարվեց ագրարային ոլորտում տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի զարգացմանն ու գյուղացիական տնտեսությունների խոշորացման խթանմանը, պարենային ապահովության (անվտանգության) մակարդակի բարձրացմանն ու հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը: Բացի այդ, կարևորվել են նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների կատարելագործման, սննդամթերքի անվտանգության միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զարգացման ու այլ խնդիրներ:

Զեկույցի ու «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման 2016-2025 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ ռազմավարություն) վերաբերյալ առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ա. Թարվերդյանը, Ա. Ղազանչյանը, Ռ. Ծառուկյանը, Ա. Իսկոյանը, Ա. Ոսկանյանը, Ն. Դարբինյանը, Ն. Մանուկյանը, Վ. Ղազարյանը, Ա. Բիլյանը, Ա. Հարությունյանը, Վ. Ուռուտյանը, Ս. Ստեփանյանը, Ե. Թարվերդյանը:**

Ա. Թարվերդյան՝

- ռազմավարության ագրարային ոլորտի գիտակրթական և խորհրդատվական հիմնական ուղղությունները բաժնում ներառել դրույթ արհեստագործական, մասնավորապես՝ տրակտորիստ-մեքենավարների բանվորական մասնագիտական կրթության կազմակերպման վերաբերյալ,

- հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվներից բացի տնտեսավարման այլ ձևերի (ֆերմերային խմբեր, գյուղատնտեսությունում համատեղ գործունեության պայմանագրով ձևավորվող տնտեսավարողներ և այլն) զարգացումը՝ ռազմավարությունում նախատեսել դրույթներ դրանց զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ,

-հստակեցնել Հայաստանի Հարապետության աշխատաշուկայում գյուղատնտեսության ոլորտի մասնագետների պահանջարկի և առաջարկի վերաբերյալ դրույթները,

- նախատեսել միջոցառումներ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն ռազմավարությունում:

Ա. Ղազանչյան՝

ռազմավարությունում նախատեսել միջոցառումներ բնական աղետների և կլիմայի փոփոխություններով պայմանավորված հանրապետությունում առավել հարմարվող մշակաբույսերի մշակություն կազմակերպելու վերաբերյալ:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսված են համապատասխան դրույթներ, բացի այդ նախատեսվում է կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցման նպատակով հանրապետությունում մինչև 2020 թվականը կազմակերպել կլիմայի փոփոխություններին հարմարվող նոր մշակաբույսերի մշակություն:

Ռ. Ծառուկյան՝

Ռազմավարությունում առանձին բաժնով անհրաժեշտ է ներկայացնել մեղվաբուծության զարգացմանը միտված միջոցառումները և քաղաքականության իրականացման ուղղությունները:

Պաշտոնական մեկնաբանություն. հաշվի առնելով պարենային ապահովության գործում մեղվաբուծության դերը, ռազմավարությունում ամբողջությամբ առանձին բաժնով ներկայացված են մեղվաբուծության զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները: Բացի այդ, մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության 2016-2020 թվականների մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ա. Իսկոյան՝

Ոռոգման խնդիրների լուծման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվել իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսված են դրույթներ ոռոգման համակարգերի արդիականացման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ոռոգելի հողատարածքների ընդլայման, ոռոգման ջրի խնայողության ուղղությամբ: Իրականացվող քաղաքականությունն ուղղված է մեխանիկական ոռոգումից ինքնահոս ոռոգման անցմանը: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ նախատեսվում է

հանրապետությունում կառուցել 4 ջրամբար, որի արդյունքում հնարավոր կլինի էականորեն բարձրացնել ջրապահովվածության մակարդակը:

Ա. Ոսկանյան՝

Կարևորելով ռազմավարության իրականացման համար հաշվարկված ֆինանսական միջոցների պահանջարկը՝ ի՞նչ աղբյուրներից է նախատեսվում իրականացնել ֆինանսավորումը:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունն իրականացվելու է հիմնականում ՀՀ պետական բյուջեի, դրամաշնորհների, տնտեսավարողների և միջազգային կառույցների ներդրումների հաշվին:

Ն. Դարբինյան՝

Ցանքատարածությունների ծավալների ավելացումն ի՞նչ գործոններով է պայմանավորված և դրանց վերաբերյալ դրույթներ նախատեսվել ե՞ն ռազմավարությունում:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսվել են համալիր միջոցառումներ: Ցանքատարածությունների ծավալների ավելացմանը նպաստել են հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնապահովության ծրագրերը, գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների՝ դիզելային վառելանյութի, պարարտանյութերի հատկացման պետական աջակցության ծրագրերը, հանրապետություն ներկրվող գյուղատնտեսությունում օգտագործվող մի շարք ռեսուրսների ավելացված արժեքի հարկավճարից ազատումը, հողօգտագործողներին ՌԴ-ից ներկրված ցորենի էլիտային սերմացուների բաշխումը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, որոնք կրելու են շարունակական բնույթ:

Հաշվի առնելով հանրապետությունում առկա ներուժը՝ առանձնակի կարևորվում է օրգանական գյուղատնտեսության զարգացումը: Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ներկայումս մեկնարկել է հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը:

Ն. Մանուկյան՝

Ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել գյուղացիական տնտեսությունների կողմից գինեգործական արտադրանքի իրացումը կանոնակարգելու ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. գյուղացիական տնտեսությունների կողմից գինու վաճառքը շշերով կատարվում է նաև Եվրոպայի զարգացած երկրներում և սահմանափակումներ չեն կիրառվում: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է խաղողագործության և գինեգործության հիմնադրամ: Նախատեսվում է, որ այն միջազգային փորձի հիման վրա կիրականացնի գործունեություն և կնպաստի ոլորտի հիմնախնդիրների

լուծմանը: Նախատեսվում է նաև Եվրոպայից ներկրել խաղողի բարձրորակ սորտեր, ստեղծել տնկարաններ, որտեղ կաճեցվեն խաղողի սեղանի և տեխնիկական ֆիլոքսերազերծ սորտերի տնկիներ և մատչելի պայմաններով կհատկացվեն այգեգործական տնտեսություններին:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ‹‹Երկրագործության գիտական կենտրոն›› ՊՈԱԿ-ում ձևավորվելու է խաղողի տեղական 120 սորտից բաղկացած գենոֆոնդ, որը պետք է պահպանվի: Նախատեսվում է նաև արդեն մշակված՝ Հայաստանի Հանրապետության խաղողագործության զարգացման ռազմավարության նախագիծը՝ խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ստեղծման հետ կապված, լրամշակել և ներկայացնել հանրության քննարկմանը:

Վ. Ղազարյան՝

Զեկույցում անհրաժեշտ է ներառել հղումներ հաշվարկների հավաստիությունը հիմնավորելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում իրականացնել կադրային փոփոխություն՝ նախարարության աշխատակազմը համալրելով երիտասարդ մասնագետներով:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում ներառված բոլոր հաշվարկները հիմնավորված են և առկա են համապատասխան հղումները:

Առանձնակի ուշադրություն է դարձվում ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմը երիտասարդ մասնագետներով համալրելու խնդրին և այդ ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

Ա. Բիլյան՝

Հանրապետությունում միջազգային չափորոշիչներին համապատասխան սպանդանոցների կառուցման և լիարժեք գործունեության ապահովման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսվել են միջոցառումներ հանրապետության պահանջարկին համապատասխան սպանդանոցների կառուցման վերաբերյալ: ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կառուցված 5 սպանդանոցները դեռևս լիարժեք գործունեություն չեն իրականացնում: Նախատեսվում է հանձնարարել հանրապետության սննդի օբյեկտներին, վերամշակող ձեռնարկություններին, հատուկ սպառողներին, ուսումնական և նախադպրոցական հաստատություններին և այլ ձեռնարկություններին իրենց կարիքների համար ձեռք բերել միայն սպանդանոցային մորթի ենթարկված միս և արգելել բակային մորթը: Հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների սղության պայմաններում 20% ԱԱՀ-ի վճարման հանգամանքը՝ նախատեսվում է անցումն իրականացնել փուլերով: Վերջինիս ուղղված մշակվել է <<Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագրին և ծրագրի

կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ա. Հարությունյան՝

Իրավական դաշտի կատարելագործման տեսլականի մեջ անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական կարգավորմանն ուղղված դրույթները:

Պաշտոնական մեկնաբանություն. Ռազմավարությունում հստակ նշված են ոլորտի օրենսդրական կարգավորումները

Վ. Ուռուտյան՝

Նպատակահարմար է ռազմավարության վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել հասարակական խորհրդի անդամներին:

Անհրաժեշտ է հասարակական խորհրդի անդամների կողմից ներկայացված՝ գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ հարցերի հենքի վրա կազմել խորհրդի աշխատանքային ծրագիր:

Պաշտոնական մեկնաբանություն. առաջարկությունը հաշվի կառնվի:

Ս. Ստեփանյան՝

Գյուղատնտեսությունում հարկային քաղաքականության մեղմման և սուբսիդավորման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. գյուղատնտեսության տարբեր ոլորտներում իրականացվում են սուբսիդավորման ծրագրեր: Առաջիկայում նախատեսվում է գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և հայեցակարգի մշակում, որում առաջադրվելու է ոլորտի սուբսիդավորման առավել արդյունավետ կառուցվածք: Բացի այդ, նախատեսվում է կապված ավելացված արժեքի հարկի հետ, փոփոխություններ կատարել ՀՀ հարկային օրենսգրքում:

Ե. Թարվերդյան՝

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում KfW բանկի աջակցությամբ կատարվել է ուսումնասիրություն հանրապետության գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ուղղությամբ և նախատեսվում է փուլային մոտեցման սկզբունքով իրականացնել ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր, որին կհաջորդի հիմնական ծրագրի իրականացումը:

Ա. Հարությունյանի և **Ս. Ավդալյանի կողմից** առաջարկվեց նիստում քննարկել հետևյալ հարցերը.

Ա. Հարությունյան՝

Միջոցներ ձեռնարկել խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ստեղծմամբ պայմանավորված առանձին ուղղություններով նախատեսված աշխատանքների կազմակերպման, մասնավորապես՝ միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. 2016 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության զարգացման հայկական գործակալությանը միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով հատկացված գումարները փոխանցվելու են խաղողագործության և գինեգործության հիմնադրամին և վերջինս կապահովի դրանց նպատակային օգտագործումը:

Ս. Ավդալյան՝

Հնարավորության դեպքում փոխհատուցում տրամադրել Զովունի համայնքում գայլերի կողմից հոշոտված կենդանիների սեփականատերերին:

Պաշտոնական մեկնաբանություն. հոշոտված գյուղատնտեսական կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու նպատակով 2016 թվականի պետական բյուջեով գումարներ նախատեսված չեն: Ապահովագրական համակարգի ներդրումն անասնապահությունում կարևորվում է, սակայն գյուղացիական տնտեսությունները ներկայումս չունեն ֆինանսական միջոցներ սպահովագրական վճարը փոխհատուցելու համար, ստեղծված իրավիճակում իրատեսական մեխանիզմների առաջադրման համար ներկայումս քննարկվում է պետության կողմից ապահովագրական վճարների սուբսիդավորման հնարավորության հարցը:

Հանրային խորհրդի նախագահ Ս. Կարապետյանի կողմից քվեարկության դրվեց՝

1/«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության 2016-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին հավանություն տալու, այն առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա լրամշակելու և հասարակական խորհրդի անդամներին ներկայացնելու հարցը

Քվեարկության արդյունքում (կողմ՝ 20, ձեռնպահ՝ 0, դեմ 0)

ՈՐՈՇՎԵՑ.

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության 2016-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին: Հաշվի առնելով առաջարկությունները և

դիտողությունները՝ ռազմավարությունը լրամշակել և ներկայացնել հասարակական խորհրդի անդամներին:

2./ Ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները քննարկելու նպատակով :

Քվեարկության արդյունքում (կողմ՝ 20, ձեռնպահ՝ 0, դեմ 0)

ՈՐՈՇՎԵՑ.

Առաջարկել հասարակական խորհրդի անդամներին՝ քննարկման նպատակով ներկայացնել հարցեր գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Նշվեց, որ խորհուրդն ունի 22 անդամ, որից ներկա են 20, 2-ը բացակայում են հարգելի պատճառներով:

Հասարակական խորհրդի նախագահ Ս. Կարապետյանի կողմից առաջարկվեց նիստի օրակարգը, որը հավանության արժանացավ խորհրդի անդամների կողմից:

Զեկույցով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ **Հ. Ծպնեցյանը** (կցվում է):

Անդրադառնալով վերջին 5 տարիների ընթացքում կատարված աշխատանքներին՝ Հրաչյա Ծպնեցյանը նշեց, որ այս ընթացքում գյուղատնտեսությունում էական դրական տեղաշարժեր են արձանագրվել, 2011-2015 թթ. ոլորտը ձևավորել է երկրի ՀՆԱ-ի 18.6%-ը, իսկ ագրովերամշակող ոլորտի հետ միասին՝ գրեթե 25.0%-ը: 2015 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 1002.2 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 11.7%-ով: 2012, 2013 և 2014 թթ. գյուղատնտեսության ոլորտում տնտեսական աճը կազմել էր համապատասխանաբար՝ 9.5, 7.1 և 7.2%: Գյուղատնտեսության տնտեսական աճի հետ մեկտեղ կարևորագույն ձեռքբերումներից է ոլորտի հիմնական ռեսուրսի՝ գյուղատնտեսական հողերի օգտագործման մակարդակի բարձրացումը:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2010-2015 թվականների ընթացքում ավելացել են 68.2 հազ. հեկտարով, միայն 2015 թվականին՝ 19.0 հազ. հեկտարով և կազմել են 351.8 հազ. հեկտար: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.8%, 2014 թվականի 74.4%-ի և 2010 թվականի 63.2%-ի դիմաց: Զեկուցողը մանրամասնորեն ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում արձանագրված զարգացման միտումները, ներկայացրել պետական աջակցության ծրագրերի՝ արդյունքային ցուցանիշները:

Դրանք են՝

-«Ցորենի սերմանաբուծության և սերմարտադրության զարգացման»,

-«Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման»,

-«Հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»,

-«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման»,

-«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»,

-«Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում»,

-«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրերը:

Անասնապահության ոլորտի զարգացման համար առանձնակի կարևորվել են <<Համայնք-ների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առաջին և երկրորդ ծրագրերը:

Այնուհետև ներկայացվեցին ՀՀ գյուղատնտեսության 2016-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարության նախագծի հիմնադրույթները:

Անդրադարձ կատարվեց ագրարային ոլորտում տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի զարգացմանն ու գյուղացիական տնտեսությունների խոշորացման խթանմանը, պարենային ապահովության (անվտանգության) մակարդակի բարձրացմանն ու հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովմանը: Բացի այդ, կարևորվել են նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողներին հասցեական աջակցության (սուբսիդավորման) մեխանիզմների կատարելագործման, սննդամթերքի անվտանգության միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի և արդյունավետության բարձրացման, գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի զարգացման ու այլ խնդիրներ:

Զեկույցի ու «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման 2016-2025 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ ռազմավարություն) վերաբերյալ առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ա. Թարվերդյանը, Ա. Ղազանչյանը, Ռ. Ծառուկյանը, Ա. Իսկոյանը, Ա. Ոսկանյանը, Ն. Դարբինյանը, Ն. Մանուկյանը, Վ. Ղազարյանը, Ա. Բիլյանը, Ա. Հարությունյանը, Վ. Ուռուտյանը, Ս. Ստեփանյանը, Ե. Թարվերդյանը:**

Ա. Թարվերդյան՝

- ռազմավարության ագրարային ոլորտի գիտակրթական և խորհրդատվական հիմնական ուղղությունները բաժնում ներառել դրույթ արհեստագործական, մասնավորապես՝ տրակտորիստ-մեքենավարների բանվորական մասնագիտական կրթության կազմակերպման վերաբերյալ,

- հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում կոոպերատիվներից բացի տնտեսավարման այլ ձևերի (ֆերմերային խմբեր, գյուղատնտեսությունում համատեղ գործունեության պայմանագրով ձևավորվող տնտեսավարողներ և այլն) զարգացումը՝ ռազմավարությունում նախատեսել դրույթներ դրանց զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ,

-հստակեցնել Հայաստանի Հարապետության աշխատաշուկայում գյուղատնտեսության ոլորտի մասնագետների պահանջարկի և առաջարկի վերաբերյալ դրույթները,

- նախատեսել միջոցառումներ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն ռազմավարությունում:

Ա. Ղազանչյան՝

ռազմավարությունում նախատեսել միջոցառումներ բնական աղետների և կլիմայի փոփոխություններով պայմանավորված հանրապետությունում առավել հարմարվող մշակաբույսերի մշակություն կազմակերպելու վերաբերյալ:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսված են համապատասխան դրույթներ, բացի այդ նախատեսվում է կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերի նվազեցման նպատակով հանրապետությունում մինչև 2020 թվականը կազմակերպել կլիմայի փոփոխություններին հարմարվող նոր մշակաբույսերի մշակություն:

Ռ. Ծառուկյան՝

Ռազմավարությունում առանձին բաժնով անհրաժեշտ է ներկայացնել մեղվաբուծության զարգացմանը միտված միջոցառումները և քաղաքականության իրականացման ուղղությունները:

Պաշտոնական մեկնաբանություն. հաշվի առնելով պարենային ապահովության գործում մեղվաբուծության դերը, ռազմավարությունում ամբողջությամբ առանձին բաժնով ներկայացված են մեղվաբուծության զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունները: Բացի այդ, մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության 2016-2020 թվականների մեղվաբուծության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ա. Իսկոյան՝

Ոռոգման խնդիրների լուծման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվել իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսված են դրույթներ ոռոգման համակարգերի արդիականացման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ոռոգելի հողատարածքների ընդլայման, ոռոգման ջրի խնայողության ուղղությամբ: Իրականացվող քաղաքականությունն ուղղված է մեխանիկական ոռոգումից ինքնահոս ոռոգման անցմանը: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ նախատեսվում է

հանրապետությունում կառուցել 4 ջրամբար, որի արդյունքում հնարավոր կլինի էականորեն բարձրացնել ջրապահովվածության մակարդակը:

Ա. Ոսկանյան՝

Կարևորելով ռազմավարության իրականացման համար հաշվարկված ֆինանսական միջոցների պահանջարկը՝ ի՞նչ աղբյուրներից է նախատեսվում իրականացնել ֆինանսավորումը:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունն իրականացվելու է հիմնականում ՀՀ պետական բյուջեի, դրամաշնորհների, տնտեսավարողների և միջազգային կառույցների ներդրումների հաշվին:

Ն. Դարբինյան՝

Ցանքատարածությունների ծավալների ավելացումն ի՞նչ գործոններով է պայմանավորված և դրանց վերաբերյալ դրույթներ նախատեսվել ե՞ն ռազմավարությունում:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսվել են համալիր միջոցառումներ: Ցանքատարածությունների ծավալների ավելացմանը նպաստել են հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնապահովության ծրագրերը, գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների՝ դիզելային վառելանյութի, պարարտանյութերի հատկացման պետական աջակցության ծրագրերը, հանրապետություն ներկրվող գյուղատնտեսությունում օգտագործվող մի շարք ռեսուրսների ավելացված արժեքի հարկավճարից ազատումը, հողօգտագործողներին ՌԴ-ից ներկրված ցորենի էլիտային սերմացուների բաշխումը, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, որոնք կրելու են շարունակական բնույթ:

Հաշվի առնելով հանրապետությունում առկա ներուժը՝ առանձնակի կարևորվում է օրգանական գյուղատնտեսության զարգացումը: Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ներկայումս մեկնարկել է հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը:

Ն. Մանուկյան՝

Ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել գյուղացիական տնտեսությունների կողմից գինեգործական արտադրանքի իրացումը կանոնակարգելու ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. գյուղացիական տնտեսությունների կողմից գինու վաճառքը շշերով կատարվում է նաև Եվրոպայի զարգացած երկրներում և սահմանափակումներ չեն կիրառվում: ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է խաղողագործության և գինեգործության հիմնադրամ: Նախատեսվում է, որ այն միջազգային փորձի հիման վրա կիրականացնի գործունեություն և կնպաստի ոլորտի հիմնախնդիրների

լուծմանը: Նախատեսվում է նաև Եվրոպայից ներկրել խաղողի բարձրորակ սորտեր, ստեղծել տնկարաններ, որտեղ կաճեցվեն խաղողի սեղանի և տեխնիկական ֆիլոքսերազերծ սորտերի տնկիներ և մատչելի պայմաններով կհատկացվեն այգեգործական տնտեսություններին:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ‹‹Երկրագործության գիտական կենտրոն›› ՊՈԱԿ-ում ձևավորվելու է խաղողի տեղական 120 սորտից բաղկացած գենոֆոնդ, որը պետք է պահպանվի: Նախատեսվում է նաև արդեն մշակված՝ Հայաստանի Հանրապետության խաղողագործության զարգացման ռազմավարության նախագիծը՝ խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ստեղծման հետ կապված, լրամշակել և ներկայացնել հանրության քննարկմանը:

Վ. Ղազարյան՝

Զեկույցում անհրաժեշտ է ներառել հղումներ հաշվարկների հավաստիությունը հիմնավորելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում իրականացնել կադրային փոփոխություն՝ նախարարության աշխատակազմը համալրելով երիտասարդ մասնագետներով:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում ներառված բոլոր հաշվարկները հիմնավորված են և առկա են համապատասխան հղումները:

Առանձնակի ուշադրություն է դարձվում ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմը երիտասարդ մասնագետներով համալրելու խնդրին և այդ ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

Ա. Բիլյան՝

Հանրապետությունում միջազգային չափորոշիչներին համապատասխան սպանդանոցների կառուցման և լիարժեք գործունեության ապահովման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ռազմավարությունում նախատեսվել են միջոցառումներ հանրապետության պահանջարկին համապատասխան սպանդանոցների կառուցման վերաբերյալ: ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կառուցված 5 սպանդանոցները դեռևս լիարժեք գործունեություն չեն իրականացնում: Նախատեսվում է հանձնարարել հանրապետության սննդի օբյեկտներին, վերամշակող ձեռնարկություններին, հատուկ սպառողներին, ուսումնական և նախադպրոցական հաստատություններին և այլ ձեռնարկություններին իրենց կարիքների համար ձեռք բերել միայն սպանդանոցային մորթի ենթարկված միս և արգելել բակային մորթը: Հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների սղության պայմաններում 20% ԱԱՀ-ի վճարման հանգամանքը՝ նախատեսվում է անցումն իրականացնել փուլերով: Վերջինիս ուղղված մշակվել է <<Հայաստանի Հանրապետությունում 2016-2020 թվականներին սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագրին և ծրագրի

կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Ա. Հարությունյան՝

Իրավական դաշտի կատարելագործման տեսլականի մեջ անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական կարգավորմանն ուղղված դրույթները:

Պաշտոնական մեկնաբանություն. Ռազմավարությունում հստակ նշված են ոլորտի օրենսդրական կարգավորումները

Վ. Ուռուտյան՝

Նպատակահարմար է ռազմավարության վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել հասարակական խորհրդի անդամներին:

Անհրաժեշտ է հասարակական խորհրդի անդամների կողմից ներկայացված՝ գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ հարցերի հենքի վրա կազմել խորհրդի աշխատանքային ծրագիր:

Պաշտոնական մեկնաբանություն. առաջարկությունը հաշվի կառնվի:

Ս. Ստեփանյան՝

Գյուղատնտեսությունում հարկային քաղաքականության մեղմման և սուբսիդավորման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. գյուղատնտեսության տարբեր ոլորտներում իրականացվում են սուբսիդավորման ծրագրեր: Առաջիկայում նախատեսվում է գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և հայեցակարգի մշակում, որում առաջադրվելու է ոլորտի սուբսիդավորման առավել արդյունավետ կառուցվածք: Բացի այդ, նախատեսվում է կապված ավելացված արժեքի հարկի հետ, փոփոխություններ կատարել ՀՀ հարկային օրենսգրքում:

Ե. Թարվերդյան՝

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ ինչպիսի՞ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

Պաշտոնական մեկնաբանություն. ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում KfW բանկի աջակցությամբ կատարվել է ուսումնասիրություն հանրապետության գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ուղղությամբ և նախատեսվում է փուլային մոտեցման սկզբունքով իրականացնել ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր, որին կհաջորդի հիմնական ծրագրի իրականացումը:

Ա. Հարությունյանի և **Ս. Ավդալյանի կողմից** առաջարկվեց նիստում քննարկել հետևյալ հարցերը.

Ա. Հարությունյան՝

Միջոցներ ձեռնարկել խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ստեղծմամբ պայմանավորված առանձին ուղղություններով նախատեսված աշխատանքների կազմակերպման, մասնավորապես՝ միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման ուղղությամբ:

Պաշտոնական մեկնաբանություն. 2016 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության զարգացման հայկական գործակալությանը միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով հատկացված գումարները փոխանցվելու են խաղողագործության և գինեգործության հիմնադրամին և վերջինս կապահովի դրանց նպատակային օգտագործումը:

Ս. Ավդալյան՝

Հնարավորության դեպքում փոխհատուցում տրամադրել Զովունի համայնքում գայլերի կողմից հոշոտված կենդանիների սեփականատերերին:

Պաշտոնական մեկնաբանություն. հոշոտված գյուղատնտեսական կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու նպատակով 2016 թվականի պետական բյուջեով գումարներ նախատեսված չեն: Ապահովագրական համակարգի ներդրումն անասնապահությունում կարևորվում է, սակայն գյուղացիական տնտեսությունները ներկայումս չունեն ֆինանսական միջոցներ սպահովագրական վճարը փոխհատուցելու համար, ստեղծված իրավիճակում իրատեսական մեխանիզմների առաջադրման համար ներկայումս քննարկվում է պետության կողմից ապահովագրական վճարների սուբսիդավորման հնարավորության հարցը:

Հանրային խորհրդի նախագահ Ս. Կարապետյանի կողմից քվեարկության դրվեց՝

1/«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության 2016-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին հավանություն տալու, այն առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա լրամշակելու և հասարակական խորհրդի անդամներին ներկայացնելու հարցը

Քվեարկության արդյունքում (կողմ՝ 20, ձեռնպահ՝ 0, դեմ 0)

ՈՐՈՇՎԵՑ.

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության 2016-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարությանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին: Հաշվի առնելով առաջարկությունները և

դիտողությունները՝ ռազմավարությունը լրամշակել և ներկայացնել հասարակական խորհրդի անդամներին:

2./ Ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրները քննարկելու նպատակով :

Քվեարկության արդյունքում (կողմ՝ 20, ձեռնպահ՝ 0, դեմ 0)

ՈՐՈՇՎԵՑ.

Առաջարկել հասարակական խորհրդի անդամներին՝ քննարկման նպատակով ներկայացնել հարցեր գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Մ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**